ՀՈՒՇԵՐ ԿԱՐԵՆ ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ՄԱՍԻՆ

1. Հայաստանի կուսկենտկոմի քարտուղար Կարեն Սերոբի Դեմիրճյանը լայնախոհ էր, անհիշաչար և համբերությամբ լսել գիտեր:

Կարեն Դեմիրճյանի հետ անձնական կապեր չեմ ունեցել: Առնչություններն էլ շատ քիչ են եղել և կրել են զուտ պաշտոնական բնույթ:

Առաջին ծանոթությունը եղել է 1973 թ. ՝ Ծաղկաձորում. հանդիպել ենք սեղանի շուրջ, երբ ինքը քաղկոմի քարտուղար էր: Մեկ-երկու անգամ էլ հանդիպել ենք Եսենտուկիում՝ հանգստանալու ժամանակ: Հետևում էր իմ հրապարակումներին և միշտ հորդորում էր զբաղվել միգրացիայի հարցերով: Հայաստանի կոմկուսի կենտկոմի պլենումների նստաշրջաններում, որը ղեկավարում էր Կարեն Դեմիրճյանը, մի քանի անգամ, ի թիվս այլոց, հանդես եմ եկել Հայաստանի բնակչության ժողովրդագրության, զբաղվածության, ինչպես նաև Երևան քաղաքի բնակչության բեռնաթափման հարցերի վերաբերյալ գիտական զեկուցումներով:

Նրա էությանը ավելի լավ ծանոթանալու առիթը դարձավ մի դիպված: 1984 թ. հունիսի 19-ին ՀԿԿ Կենտկոմի բյուրոյի նիստում քննարկվում էր ՀԽՍՀ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտի գիտահետազոտական գործունեության մասին հարցը[1]: Նիստերի դահլիճը լեփ-լեցուն էր: Կենտ-կոմի բյուրոյի անդամների հետ միասին մասնակցում էին Կենտկոմի բաժնի վարիչներ, Մինիստրների խորհրդի, պետպլանի ղեկավար անձնակազմը, մինիստրներ, ակադեմիայի փոխպրեզիդենտները: Հարցը նախապատրաստել և ներկայացնում էր Կենտկոմի գիտության բաժնի վարիչը, ինչպես նաև ինստիտուտի տնօրեն՝ ակադեմիկոս Ա. Առաքելյանը: Կ. Դեմիրճյանը դժգոհ էր ինստիտուտում տարվող աշխատանքների արդյունքներից:

Քննարկման ընթացքում, որպես ինստիտուտի փոխտնօրենի, հաջորդը ինձ ձայն տրվեց: Մեկ-երկու բոպե տևած ինքնաքննադատական խոսքից հետո, ի զարմանս բոլորի, քննադատության թիրախն ուղղեցի դեպի վերին օղակները: Միտք արտահայտեցի, որ հրատապ արժեք ունեցող մի շարք մշակումների արդյունքներ, համապատասխան զեկուցագրերի տեսքով ներկայացվել են ՀԽՍՀ պետպլան, Մինիստրների խորհուրդ, Երևանի քաղկոմ, ինչպես նաև ՀԿԿ Կենտկոմ: Ցավոք, այդ գիտական մշակումները ընթացք չեն ստացել:

- Ինչ է ստացվում,- շարունակում եմ ես,- քանի դեռ երևույթը չի հասնում իր ծայրահեղության աստիճանին, չի ստեղծվում կրիտիկական պահ, դանակը չի հասնում ոսկորին, գիտության բարձրացրած հարցերին ուշադրություն դարձնող չկա: Իսկ երբ վրա է հասնում այդ անելանելի պահը, տագնապահար հրահանգում են ՝ շուտ-շուտ, շտապ մշակեք և մեկ-երկու օրից ներկայացրեք այսինչն ու այնինչը: Մոռանում են, որ հենց այդ մշակումները «ենջում են» իրենց գզրոցներում: Եվ, երբ հիշեցնում ենք այդ մասին, գտնում են, որ դրանք հնացել են, նոր մշակումներ են պետք: Եվ ցավոք, այդ նոր մշակումները նույնպես արժանանում են նախորդների ճակատագրին:

Դահլիճի համակ լռությունն ընդհատեց Դեմիրճյանը:

---

[1] Նյութը վերցված է Հայաստանի ազգային արխիվից (1998, ֆ. 266, ց. 1, գ. 49, թ. 5): Տպագրվում է խմբագրական մասնակի շտկումներով:

- Ինչպե՞ս թե,- թնդաց նրա ձայնը,- այդ ինչ թեմաներ են, ինչ մշակումներ, որոնցից տեղյակ չենք:

Թվարկեցի մի շարք հիմնախնդիրների նվիրված չորս թեմա:

1968 թ. ինստիտուտում կանխորոշվել են Հայաստանի բնակչության վերաբերյալ տվյալները և աշխատանքային ռեսուրսները 1965-1985 թթ.: Հեռանկարային ժամանակաշրջանի համար հիմնավորվել են այդ ռեսուրսների օգտագործման բոլոր ուղղությունները: 377 էջ ծավալով, ռուսերեն հրատարակված եռահատոր, գաղտնի ծածկագիր ունեցող աշխատանքը հատուկ փոստով առաքվել է ԽՄԿԿ և Հայաստանի Կենտկոմների ապարատներին, ամբողջ երկրի և Հայաստանի կառավարություններին, պետպլաններին, տնտեսագիտական գիտահետազոտական ինստիտուտներին և բուհերին, անհատ հետազոտողների՝ շուրջ 600 հասցեներով:

– Ճիշտ է,- նկատեց Կարեն Մերոբիչը,- այն ժամանակ աշխատում էի քաղկոմում, այդ հատորներն անձամբ ստացել եմ և մեծ հետաքրքրությամբ կարդացել: Արժեքավոր ուսումնասիրություն է:

– Չէ՞ որ այնտեղ գիտականորեն հիմնավորվում և ահազանգվում էր, որ 1970-ի կեսերից հանրապետությունում խստորեն կավելանա աշխատանքային տարիք մուտք գործող բնակչությունը, և առաջարկվում էին նրա զբաղվածության ուղղությունները: Պետք է անցներ 7-8 տարի, որ 1976 թ. հունվարյան պլենումում դուք արձագանքեիք, որ հանրապետությունում սպասվում է դեմոգրաֆիական բարդ իրավիճակ:

Բայց չէ՞ որ մենք այդ իրավիճակը թեակոխել էինք 1970-ի սկզբներին:

Անուշադրությունը շատ թանկ նստեց ժողովրդին, աշխատանքային նոր տեղեր քիչ ստեղծելու պատճառով սկիզբ առավ զանգվածային արտագնացությունը:

Մյուս թեմաները,- շարունակում եմ ես,- վերաբերում են Երևանի բնակչության չհիմնավորված և անզուսպ աճին, այն կարգավորելու մեխանիզմներին, փոքր, մասնավորապես 60-70 հազարանոց փոքր քաղաքների զարգացումը խրախուսելուն, Սևանա լճի նկատմամբ հոգատարության, հիմնական ֆոնդերի օգտագործման, ինչպես նաև մինչև 2000 թ. դեմոգրաֆիկ զարգացման հիմնախնդիրներին: Չէ՞ որ այդ պրոբլեմներով նույնպես Ձեզ են ներկայացվել ուսումնասիրության արդյունքները:

– Դեմոգրաֆիայի հարցը վերջերս դարձավ ՀԿԿ Կենտկոմի բյուրոյի քննարկման հարց,- ավելացրեց Դեմիրճյանը:

– Իսկ մենք ի՞նչ իմանանք, թե Ձեր բյուրոյում ինչ հարցեր եք քննում,- արձագանքեցի ես:

– Ինչպե՞ս թե «Ձեր բյուրոյում»,- սաստեց Դեմիրճյանը և ոտքի կանգնելով՝ շեշտեց, թե՝ դա ինչ արտահայտություն է: Ես զգացի, որ սայթաքել եմ, զղջումի պահ ապրեցի և նկատեցի.

– Ներողություն եմ խնդրում այդ արտահայտության համար, բայց այն օգտագործում եմ ոչ թե հեգնանքով, այլ պարզապես նկատի ունեմ, որ Հայաստանի կենտկոմի բյուրոն գլխավորում եք Դուք, և որպես հարգանքի նշան օգտագործեցի «Ձեր բյուրո» արտահայտությունը:

Տարբեր հարցերի շուրջ մեր բանավեճը շարունակվեց. այն տևեց 28 րոպե: Տոն տվողն ինքն էր: Երևի ցանկանում էր անկեղծ զրույցը շարունակել:

Եղան ելույթներ: Հանդես եկան ՀԿԿ Կենտկոմի քարտուղարներ, ՀԽՍՀ մինիստրների խորհրդի և պետպլանի կոլեգիայի անդամներ, կենտկոմի բաժնի վարիչներ՝ պարսավելով ինստիտուտը: Քննադատվեցին իմ առաջ քաշած պարզ հարցադրումները: Նիստը ամփոփեց ինքը՝ Դեմիրճյանը: Ես անսահման հիացա 40 րոպե տևողությամբ նրա ամփոփիչ ելույթից: Նա հարցերը ներկայացնում էր տրամաբանական հաջորդականությամբ, հատուկ շեշտադրությամբ, հիմնավոր հարցադրումները համեմվում էին ժողովրդական բառ ու բանով: Առանձնապես ներշնչող էին էկոնոմիկայի բնագավառում նրա ճիշտ պատկերացումները, որոնց մասին վկայում էին նրա

տնտեսագիտական գիտելիքների անսպառ պաշարը, հանրապետության էկոնոմիկային տիրապետելու ունակությունը, խոր, հաճախ նաև փիլիսոփայական ընդհանրացումները: Այդ ելույթով, նա իր մասին իմ պատկերացումներում սրբեց ու տարավ «տեխնոկրատիզմը», որում հաճախ մեղադրում էին Կենտկոմին: Ընդհակառակը, դա հիմք էր ծառայում տնտեսագիտական լայնախոհ ընդհանրացումների համար: Առաջին հայացքից նկատելի դարձավ, որ նա տիրապետում է տնտեսագիտության ոչ թե տառին կամ ոչ միայն ընդհանուր տնտեսագիտությանը, այլ տնտեսագիտության պրոբլեմատիկ խնդիրներին:

Հետագայում, 1990-ականի վերջերին, մեկ-երկու անգամ ոչ պաշտոնական և անկեղծ զրույցների ընթացքում, վերստին համոզվեցի, որ նա տիրապետում է գիտելիքների մի ամբողջական, բազմաժանր համակարգի, կարդացող է ու խորությամբ յուրացրել է հունական փիլիսոփայությունը, լավ տիրապետում է հների հայացքներին, քննական վերլուծությամբ մեկնաբանում ու մատուցում է նրանց ստեղծած արժեքները:

Հետաքրքիր զրուցակից էր, արվեստի, մշակույթի, արևմտյան, ռու- սական և հայ գրականության հարցերի շուրջ նրա դիտողությունները ունկնդրվում էին մեծ հետաքրքրությամբ:

Իր ամփոփիչ ելույթում, մոռանալով ընթացքում ցույց տված զայրույթը, նկատելի գոհունակություն արտահայտեց իմ հարցադրումների վերաբերյալ, որոշ հարցադրումների համաձայն չէր, որոշ հարցադրումներ համարեց բանավիճելի: Նա ինձ վրա թողեց խոշոր քաղաքագետի, լավ կազմակերպչի և տնտեսագետի տպավորություն: Ելույթի ընթացքում խորհում էինք՝ ինչ լավ է, որ Հայաստանն ունի համակողմանի զարգացած և շատերիցս վեր կանգնած նման առաջին քարտուղար:

Հարցի քննարկումն ավարտվեց: Հայտարարվեց ընդմիջում: Մենք գոհունակությամբ թողեցինք դահլիճը: Աստիճաններով իջնելու պահին մեկը ձայնեց՝ ասելով, որ Կարեն Սերոբիչը ինձ հրավիրում է իր մոտ:

Նա կանգնած էր դահլիճի մեջտեղում՝ մի խումբ ընկերներով շրջապատված: Նկատելով ինձ՝ մեկ-երկու քայլ առաջացավ և իր հզոր ձեռքերը մեկնեց ինձ, նրա ափերի մեջ ես զգացի իմ ձեռքերի տկարությունը:

– Իսկ Դուք գիտեք,- դիմեց նա ինձ ժպտալով,- որ Ձեր բոլոր հոդվածները կարդում եմ և զարմանալի է, որ սխալներ չեմ գտնում: Գրքերդ չես նվիրում: Լավ չէ: Երևի զգուշանում ես, որ սխալներդ կգտնեմ:

Նա հետաքրքրվեց իմ ծննդավայրով:

– Հայ մարդուն, երբ հարցնում են ծննդավայրը, ծնողների ծննդավայրն է ներկայացնում,- վրա բերեցի ես,- Դուք ի՞մ ծննդավայրն եք հարցնում, թե՞ իմ ծնողների:

– Երկուսն էլ:

– Ծնողներս Կարինի Բասեն գավառից են, Առաջին համաշխարհայինից մազապուրծ գաղթականներ, իսկ ես…,- չհաստատեցի պատասխանել և նա չիմացավ, թե որն է իմ ծննդավայրը:

Բաժանվեցինք, իր առաջարկությամբ հաջորդ օրը ժամը 3-ին Կենտկոմում հանդիպելու՝ բանավեճը շարունակելու մտադրությամբ: Հաջորդ օրը հեռաձայնեց օգնականը՝ հայտնելով, որ Կարեն Սերոբիչի հետ հանդիպումը տեղի չի ունենա. երեկ մոռացել էր, որ այսօր միասնական քաղօր է: Այդ նպատակով նա գնացել է «Հայէլեկտրո» գործարան: Ես Դեմիրճյանին հասցեագրված գրքերս հանձնեցի օգնականին, մեր հանդիպումը այդպես էլ տեղի չունեցավ:

Կ. Դեմիրճյանի հետ հաջորդ հանդիպումը չորս տարի անց՝ 1988 թ. փետրվարի 21-ին էր: Նախօրյակին Ղարաբաղյան հարցի կապակցությամբ ցույցի էին դուրս եկել լրագրողները: ՀԿԿ Կենտկոմի շենքում հրավիրված մտավորականների հավաքը նվիրված էր այդ հարցին:

Կ. Դեմիրճյանի հորդորներից հետո, երկրորդ թե երրորդ ելույթը ես ունեցա: Ղարաբաղյան շարժման ընթացքի նկատմամբ Կենտրոնի ցուցաբերած վարքագծի մեջ մեղադրեցի Կենտկոմին:

Կ. Դեմիրճյանը կես դառնացած, կես մտահոգ, պատասխանեց.

– Ի՞նչ անենք: Դուք մեզ մեղադրում եք Ղարաբաղյան շարժումը չգլխավորելու, այնտեղ Մոսկվայում՝ մեղադրում են ծայրահեղականներին գլխավորելու և պատժի չենթարկելու համար: Ի՞նչ անենք մենք: Կարդացե՞լ եք այսօրվա «Պրավդան»: Լույս է տեսել «Էմոցիա ի ռացում» հոդվածը: Մի տեսեք, թե ինչպես են մեզ գամում անարգանքի սյունին:

Պատմեց նաև, որ ինքը և Ֆադեյ Սարգսյանը, մի քանի օր առաջ ՍՄԿԿ Կենտկոմում հարցը բարձրացրել են ամենայն լրջությամբ, բայց արժանացել են խիստ պարսավանքի:

– Ղարաբաղյան թնջուկի լուծումը շատ ավելի դժվար է, քան պատկերացնում ենք: Դեմ են բոլորը,- եզրակացրեց Դեմիրճյանը:

Ինչքան ժամանակ պետք է անցներ, որ համոզվեինք Դեմիրճյանի ասածների ճշմարտության մեջ:

Այդ օրը եղան Ղարաբաղյան հիմնահարցը պաշտպանող լավ ելույթներ: Հավաքի ավարտից հետո Կ. Դեմիրճյանն իր մոտ հրավիրեց մի խումբ մտավորականների, հիմնականում ակադեմիկոսների:

Դեմիրճյանին հորդորեցինք, որ անձամբ ինքը ելույթ ունենա հեռուստատեսությամբ և ժողովրդին ասի ճշմարտությունը: Համաձայնվեց: Բայց... Ուրբաթն ավելի շուտ եկավ, քան շաբաթը: «Պրավդայի» հոդվածի հետքերով ամբողջ երկիրը, բոլոր հանրապետությունների Գերագույն խորհուրդների նախագահության նախագահները խաչակրաց արշավանքի դուրս եկան Հայաստանի «ծայրահեղականների» դեմ՝ մեղադրելով երկրի սահմանային ամբողջականությունը խաթարելու և ուրիշի հողերին տեր դառնալու «նկրտումների» մեջ:

Պատահական չէր, որ Մ. Ս. Գորբաչովը Հայաստանի Կենտկոմի առաջին քարտուղար Կ. Ս. Դեմիրճյանին ազատեց առաջին քարտուղարի պարտականությունից: Կ. Ս. Դեմիրճյանը կամովին գնաց «Հայէլեկտրո» գործարան, որպես տնօրեն:

2. Երկխոսություն քարտուղարի հետ[2]

1988 թ. մարտի 21-ին ՀԿԿ Կենտկոմում խորհրդակցություն հրավիրվեց մարտի 26-ին նախատեսված ցույցի նպատակահարմարության մասին: Խորհրդակցության բոլոր մասնակիցները միաձայն գտնում էին, որ ցույցն անտեղի է և կարող է չնախատեսված հետևանքներ ունենալ:

Ի թիվս այլոց, ելույթ ունեցա նաև ես, որը վերածվեց երկխոսության իմ և ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Կ. Դեմիրճյանի միջև:

---

[2] Նույն տեղում, գ. 57, թ. 11:

Վ. ԽՈՋԱԲԵԿՅԱՆ – *Ես միանգամայն պատճառաբանված եմ համարում ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար ընկ. Կ. Դեմիրճյանի հարցադրումը 1988 թ. մարտի 26-ին Երևանում նախատեսվող միտինգի կապակցությամբ: Ճիշտ եմ համարում ընկ. Կ. Դեմիրճյանի մտահոգությունը և գտնում, որ կազմակերպություններում պետք է լուրջ աշխատանք տանել երիտասարդությանն այդ քայլից հետ պահելու համար: Թեև դա կապված է մեծ դժվարությունների հետ, մանավանդ ուսանող երիտասարդությանը հորդորելու, համոզելու, բայց ուժերի մեծ լարումով պետք է հասնել այն բանին, որ մարտի 26-ի միտինգը տեղի չունենա: Սակայն ես համաձայն չեմ Լեռնային Ղարաբաղի և նրա շուրջ ծագած երևանյան միտինգների գնահատման հարցում ընկ. Կ. Դեմիրճյանի հարցադրումներին և միտինգների մասնակիցների հասցեին ներկայացվող նման մեղադրանքներին: Պետք է մատնանշել, որ ՀԿԿ Կենտկոմի բյուրոն հանրապետությունում ստեղծված այսպիսի արտակարգ, անսպասելի իրավիճակում այդ օրերին, փոխանակ սեփական պլատֆորմ մշակելու, կտրվեց ժողովրդական զանգվածներից:*

Կ. ԴԵՄԻՐՃՅԱՆ – *ՀԿԿ Կենտկոմը ունի մշակված պլատֆորմ:*

Վ. ԽՈՋԱԲԵԿՅԱՆ – *Ապա այդ ինչպե՞ս եղավ, որ Ադրբեջանի ԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Բաղիրովը կարողացավ օր առաջ մտնել ՍՄԿԿ Կենտկոմ, կեղծել երևույթների բուն էությունը և մտացածին փաստերով թյուրիմացության մեջ գցել ՍՄԿԿ ԿԿ-ի քարտուղարությանը: Նա կարողացավ այս հարցում վատ դեր խաղալ:*

Ես չեմ ժխտում, որ որոշակի մեղք ունենք մենք՝ հանրապետության պատմաբաններն ու տնտեսագետները, որոնք Անդրկովկասի ժողովուրդների պատմության ասպարեզը թողեցին Ադրբեջանի որոշ պատմաբաններին ու տնտեսագետներին, որոնց ելակետային սկզբունքը ոչ թե գիտական պատմության ստեղծումն է, այլ այն իրենց մտացածին ցանկությանը հարմարեցնելը: Տարիներ ի վեր մեզ մոտ ամեն կերպ արգելվում էին Խորհրդային Հայաստանի տարածքում չգտնվող պատմական Հայաստանի անցյալի, ներկա իրավիճակի վերաբերյալ, սոցիալ-տնտեսական, ժողովրդագրական, մշակութային ժառանգության և այնտեղ բնակվող հայ ժողովրդի համար կենսական անհրաժեշտություն ներկայացնող բազում հարցերով հայ պատմաբանների ու տնտեսագետների զբաղվելու փորձերը: Հայ պատմաբանները հազիվ իրավունք են ունեցել հանդես գալու Ադրբեջանի պատմաբանների աշխատություններում տեղ գտած չափը չունեցող խեղաթյուրումների որոշ մասի օբյեկտիվ քննադատությամբ, այն էլ միայն Հայկական ԽՍՍՀ-ում հրատարակվող պարբերականների էջերում: Նրանք «հարձակվում են», իսկ մենք՝ «պաշտպանվում»: Մինչդեռ ֆուտբոլային խաղից էլ հայտնի է, որ հարձակումը բերում է հաղթանակ, պաշտպանությունը՝ պարտություն…

Մամուլում և զանգվածային լրատվության գործունեության մեջ թույլ տրվեցին կամայականություններ և խեղաթյուրումներ:

Կ. ԴԵՄԻՐՃՅԱՆ – *Ինչո՞վ բացատրել երեկվա ավելորդ միտինգները:*

Վ. ԽՈՋԱԲԵԿՅԱՆ - *Ադրբեջանի և Հայաստանի աշխատավորությանն ուղղված Մ. Ս. Գորբաչովի դիմումի հրապարակումից անմիջապես հետո Երևանում միտինգները դադարեցին: Ժողովուրդը վանկարկում էր «Լենին, պարտիա, Գորբաչով»: Երիտասարդությունը շաբաթ և կիրակի օրերին անցավ գործի՝ նախորդ օրերի բաց թողածը աշխատանքային եռանդով վերականգնելու մտադրությամբ ու գիտակցությամբ: Բայց մարտի 20-ի երեկոյան երիտասարդությունը նորից թատերական հրապարակ իջավ «Երեկոյան Երևան» թերթի լույս տեսած և արդեն կրպակներում վաճառվող համարի ավելորդ բռնագրավման առիթով: Ի՞նչ էր հրապարակել թերթը: Մի անմեղ հեռախոսային հաղորդում ԼՂԻՄ-ի կուսակցական կազմակերպության պլենումի մասին: Կրպակներում երեկոյան վաճառվող թերթերում զետեղված*

հաղորդագրությունը հաջորդ օրն առավոտյան վաճառվող նույն համարից հանվել, իսկ նախորդ տարբերակը կրպակներից հավաքվել էր:

Կ. ԴԵՄԻՐՃՅԱՆ – *Մեր հանրապետության մամուլում Լեռնային Ղարաբաղի մասին հոդված կարող ենք տպագրել միայն Ադրբեջանի մամուլի գործակալության հաղորդմամբ:*

Վ. ԽՈՋԱԲԵԿՅԱՆ – *Բայց չէ՞ որ մենք ապրում ենք ԽՄԿԿ Կենտկոմի կողմից հռչակված հրապարակայնության ու դեմոկրատիայի մի գեղեցիկ ժամանակաշրջանում: Եվ թերթը հրապարակել էր մի փոքրիկ հաղորդում մարզի կուսակցական կազմակերպության պլենումի մասին: Հաղորդումը տպվել էր մարզի թղթակցի հեռախոսային զրույցի նյութերով: Այդ նույն հաղորդագրությունը լույս էր տեսել նաև Ստեփանակերտի «Լեռնային Ղարաբաղ» թերթում: «Երեկոյան Երևանի» հազարավոր օրինակներ վաճառվել էին կրպակներում: Էլ ի՞նչ իմաստ ուներ հաջորդ օրն առավոտյան բաժանորդներին և կրպակներ առաքել թերթի նույն համարի մի նոր տարբերակ՝ առանց այդ հաղորդման: Դրանով իսկ մենք ավելորդ տեղը չդրդեցի՞նք երիտասարդությանը, որ նա նորից հանդես գա մամուլի նկատմամբ թույլ տրվող կամայականության դեմ՝ ի բողոք մամուլի և մասսայական ինֆորմացիայի այլ ձևերի կողմից «լռության դավադրության», ի բողոք իրականությունը խեղաթյուրելու և կեղծված հաղորդումների:*

Կ. ԴԵՄԻՐՃՅԱՆ – *Միևնույն է, «Երևան» թերթն այդ իրավունքը չուներ:*

Վ. ԽՈՋԱԲԵԿՅԱՆ – *Քամու և անձրևի ուղեկցությամբ, «Երեկոյան Երևանի» նոր արտատպված տարբերակը ձեռքներին, երիտասարդությունը թատերական հրապարակից շարժվում է մինչև մամուլի տուն: Իր վրդովմունքը արտահայտում է մամուլի տան առջև թերթերի մի մեծ կույտ գոյացնելով և նորից հետ է շարժվում դեպի ռադիոյի տուն՝ պահանջելով վերջ տալ «լռության դավադրությանը», հանրապետության սահմաններից դուրս գանգվածային լրատվության կողմից «Ղարաբաղի և նրա շուրջ» կատարվող դեպքերի մասին թույլ տրվող կիսատ-պռատ, իրականությունից հեռու, շինծու հաղորդումներին և ավելորդ ընդհանրացումներին:*

Այն օրերին, երբ մեր երիտասարդությունը Մ. Գորբաչովի կոչին համապատասխան վերջ է տալիս միտինգներին ու գնում է ի գործ, Ադրբեջանում կազմակերպվում է Սումգայիթի հայ բնակչության երեք օր տևող ջարդը: Բաքվից՝ Սումգայիթ կես ժամվա ճանապարհ է: Այդ երեք օր ու գիշերվա ընթացքում Ադրբեջանի կուսակցական ղեկավարությունը Բաքվում այդ մասին ոչ մի լուր չէ՞ր «ստանում», և ինչո՞ւ որևէ միջոց չէր ձեռնարկվում: Ադրբեջանի կուսակցական և իրավապահ մարմինների որոշ ղեկավար աշխատողների կողմից դա դիտավորյալ «անտեղյակություն» էր, սակայն ուղղակի մեղսակցություն էր Սումգայիթի դեպքերին:

Մ. Գորբաչովը շեշտեց, որ Լեռնային Ղարաբաղում և Հայաստանում ելույթները հակասովետական բնույթ չեն կրում, այստեղ չի դրվում սովետական պետությունից անջատվելու հարց:

Ելնելով նման բանական հարցադրումից՝ ես ցանկանում եմ իմ վերաբերմունքն արտահայտել երևանյան միտինգների նկատմամբ:

Ընկ. Դեմիրճյան, վաղը դուք էլ չեք լինի, մենք էլ չենք լինի, բայց դա պատմություն է, ժողովուրդների պատմության մի մասը և սերունդներին որպես ժառանգություն պետք է թողնել իրական պատմություն:

Երևանյան միտինգների օրերին մենք հոգով վեհացանք, հիացանք մեր ուստերի ու դուստրերի կազմակերպվածությամբ: Մենք խոր շրջադարձ ապրեցինք երիտասարդության նկատմամբ մեր ունեցած պատկերացումների մեջ: Մինչ այդ մեզ թվում էր, որ երիտասարդությանն առաջին հերթին հետաքրքրում է առտնին, բարեկեցիկ կյանքը, նրան բնորոշ են սպառողական հատկությունները: Ինչ-որ տեղ մեզ վախեցնում էր նրա՝ աշխատանքային թվացող «ծուլությունը»: Բայց նա լայնախոհ էր, սթափ, համբերատար, կուսակցության կիրառած քաղաքականությանը նվիրված՝ թույլ չտալով ազգայնամոլական և քրեական ոչ մի արարք: Մենք՝ միջին և տարեց սերնդի մարդիկս, հոգով վեհացած՝ ընթանում էինք փառապանծ երիտասարդության շարքերի հետևից, նրա ստվերի տակ: Երիտասարդությունն ամբողջ հայ ժողովրդի հետ, անկախ դասային ու սոցիալական պատկանելությունից, մեծ երախտիքով ընդունեց, սթափ ու լրջախոհ գնահատեց Ադրբեջանի ու Հայաստանի ժողովուրդներին ուղղված՝ ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Մ. Ս. Գորբաչովի դիմումը և տեղն ու տեղը լքեց միտինգների հրապարակը: Հայ ժողովուրդն իր մեջ գտավ մի ներքին հզոր ուժ՝ արձագանքելու գլխավոր քարտուղարի դիմումին, մարելու բորբոքված կրակը, հանուն գործի և ստեղծագործության: Հավանություն տալով դիմումում առաջադրված դրույթներին՝ նա չդավաճանեց հայրենասիրական զգացմունքներին, բայց ավելի արժեքավորեց դարերով ժողովուրդների միջև սրբագործված բարեկամությունը:

Այդ ելույթները եկան ապացուցելու վերակառուցման և դեմոկրատիայի մասին կուսակցության առաջադրած բանաձևի անաղարտությունը, հայ ժողովրդի անկոտրում կամքը և նրա պատրաստակամությունն այդ քաղաքականության կենսագործման ճանապարհին: Չէ՞ որ այդ ելույթները, ծնվելով վերակառուցումից, լինելով նրա պտուղները, ընթանում են վերակառուցումն ու դեմոկրատիան պաշտպանելու լոզունգներով, ԽՄԿԿ արդի քաղաքական կուրսի նկատմամբ ցուցաբերվող նվիրվածությամբ:

Այսօր այլևս անմոռաց պատմություն են այդ օրերի զանգվածային պոռթկումները, խաղաղ ու մեծարվեստ միտինգները: Դրանք ոչ թե մոռացության պահեր են, այլ իմաստության մեծ դպրոց, որից պետք է դասեր քաղել, դասեր ճշմարտության և արդարության վերահաստատման, դասեր ժողովրդի հետ լինելու, նրա խոհեմությանն ապավինելու, նրա իրավացի պահանջները գլխավորելու՝ պատմության մեջ թույլ տրված սուբյեկտիվ շեղումներն ու սխալները շտկելու համար:

Հայ ժողովրդի հորդացող ալիքը, որ այդ օրերին դուրս եկավ իր ափերից, բայց երբեք չպղտորվեց, իր զուլալ տարերքի հետ չսրբեց ու չտարավ անցյալի դառնության բոլոր հուշերը: Այն նման չէր հորդացած ու փրփրակալած գետերի, որոնք հունից դուրս եկած հոսանքով, կեղտաջրի հետ սրբում-տանում են ափերին փռված ամեն ինչ՝ պիտանին և ոչ պիտանին, ավերմունք ու մարդկային զոհեր պատճառում: Հայ ժողովուրդը, ամբողջական ծովի նման, որքան ալեկոծվեց, նույնքան և հանդարտվեց, պարզվեց, որքան փոթորկվեց, նույնքան ինքնամաքրվեց, և խաղաղվելուց առաջ դեպի ափ նետեց իր անարատ ջրերը թափանցած իրեն խորթ տարրերին: Ծովի նման՝ ժողովրդի հորդացող ալիքները զարնվեցին ափերին, հետ եկան՝ մնալով ամբողջության մեջ: Հայ ժողովուրդն իր ալեկոծու- մի պահին մնաց հանգիստ, խաղաղ՝ չմոռանալով, որ համաշխարհա- յին ժողովրդի մի փոքրիկ մասնիկն է և ինտերնացիոնալ խնդիրներ ունի լուծելու:

Հայ ժողովրդի երևանյան ու դարաբաղյան միտինգները ցույց տվեցին, որ նա հորդանալու ու բորբոքվելու պահին էլ համբերատար է, բռնկվել է ոչ թե պղտորվելու, այլ ինքնամաքրվելու, հրաշքներ գործելու պատրաստակամությամբ: Հայ ժողովուրդը, ինչպես միշտ, այս անգամ էլ

հանդես եկավ ի նվիրվածություն իր մեծ ու փոքր հայրենիքի, ի ամրապնդում երկրի բոլոր ազգերի՝ ոչ լոգունգային, այլ անաղարտ բարեկամության, ի պաշտպանություն խորհրդային երկրի նվաճումների, հանուն դրանց բազմապատկման:

3. *ԽՄԿԿ կոմկուսի Կենտկոմի գլխավոր քարտուղար Մ. Ս. Գորբաչովի ադրբեջանամետությունը*

Որպես շարժառիթ, առաջին պլան էր մղվում հայ ժողովրդի նկատմամբ Ադրբեջանում տարվող խտրականության, ազգային արժանապատվության ոտնահարման, վանդալիզմի ու ցեղասպանության քաղաքականությունը: Դրա «պսակը» դարձավ Սումգայիթը: Ադրբեջանի ու Հայաստանի աշխատավորությանը Մ. Գորբաչովի հղած դիմումից չէր անցել մի քանի օր, երբ կազմակերպվեց սումգայիթյան եղեռնը[3]: Եվ այսպես, 1988 թ. ընթացքում Երևանի Թատերական, Ստեփանակերտի Լենինի անվան հրապարակները լեփ-լեցուն էին հայ ժողովրդի նկատմամբ Ադրբեջանում կազմակերպված զանգվածային անկարգությունների, բանդիտիզմի միջադեպերի առիթով:

Չմոռանանք, որ հայ ժողովրդին 1988 թ. «էքստրեմիզմի» և «շովինիզմի» մեջ մեղադրելու համար Ադրբեջանում ծավալվող մարաթոնին միացան Միության կենտրոնական մամուլի բոլոր օրգանները, կենտրոնական հեռուստատեսությունն ու ռադիոն: Միայն կողմնորոշման հետևանքով անպակաս էին հայ ժողովրդին «ուրիշի հողերը զավթելու համար կատարվող ոտնձգությունների» վերաբերյալ խտրական բնույթ կրող և նախնական սխեմաներով հրավիրված նիստերը, Ադրբեջանում աշխատավորական միտինգները: Բայց դա դեռ բոլորը չէ:

Հայ ժողովրդին վերստին բորբոքելու առումով վճռական դեր խաղացին 1988 թ. հուլիսի 18-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նիստում ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Մ. Ս. Գորբաչովի վարվելակերպը և դիրքորոշումը[4]:

Այդ նիստում արդեն պարզ դարձավ, թե ինչու Միության Կենտրոնը սումգայիթյան զոհերի համար երբևիցե ցավակցություն հայտնելու փորձ անգամ չարեց: Անշուշտ, դարաբաղյան շարժումը խոտորելու, հարցը վերջնականապես թաղելու գործում օգուտ չտվեցին Միության քաղաքական պիտակներն ու անհարկի ահաբեկումները:

Տարակույս չկա, որ «Սումգայիթը», հետագայում «Բաքուն», «Գանձակը», «Խոջալուն», «Շուշին», «Աղդամը» և այլն նախապես պլանավորվել, կազմակերպվել և ղեկավարվել են մեկ կենտրոնից:

Սումգայիթից հետո Ադրբեջանում ապրող հայ բնակչության ճակատագրի համար «մտահոգություն» արտահայտեց ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Մ. Գորբաչովը: Մի բան պարզ էր, որ գլխավոր քարտուղար Մ. Գորբաչովի «մտահոգությունը» շատ լավ ընկալեցին Ադրբեջանում: Փորձը լավ քննություն բռնեց: Սումգայիթյան և դրան հաջորդող դեպ-քերի դահիճները շրջանցվեցին, ոճիրը մնաց ստվերում, բանդիտիզմը չորակավորվեց և քաղաքական գնահատական չստացավ: Իսկ դա, եղեռնագործին ավելի ոգևորելով, նոր ոճիրների մղեց: Միտումնավոր քայլ չէ՞ր արդյոք սումգայիթյան դատավարության գործը միութենական 10- 12 դա-տարանների միջև բաժանելը: «Ինչո՞ւ, ո՞ւմ էր ձեռնտու Սումգայիթի գործը բաժան-բաժան անելը, այն Ռուսաստանի Ֆեդերացիայի մարզային դատարաններին հանձնելը, և դրանով իսկ լավ նախապատրաստված գործի դատավարությունը հունից շեղելը: Դրանում մեղք չունե՞ր

---

[3] **Խոջաբեկյան Վ. Ե.,** *Արցախը փորձության ժամին, Ե., 1991, էջ 98-104:*

[4] *Նույն տեղում, էջ 101:*

արդյոք Մ. Ս. Գորբաչովը: Մ. Ս. Գորբաչովը մեղավոր էր նաև Կարեն Դեմիրճյանի հարցում»[5]:

Այսպիսով, ժամանակի ընթացքում բացահայտվում է Մ. Ս. Գորբաչովի ադրբեջանամետությունը և հայատյացությունը: Այդ պատճառով էլ, հետագայում Վ. Խոջաբեկյանն իր «Արցախը փորձության ժամին» գրքի բազմաթիվ գլուխներում դատապարտում էր ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Մ. Ս. Գորբաչովի բռնած դիրքը «հրապարակայնության և երկխոսության» վերաբերյալ և բազմիցս գամել է անարգանքի սյունին…

Անդրդվելի էր ԽՍՀՄ պրեզիդենտ Մ. Գորբաչովը: Նա ոչինչ չէր նկատում, ոչինչ չէր տեսնում: Տեղին կլիներ ասել, որ նա միշտ էլ հանիրավի շրջանցել է Ղարաբաղյան հիմնախնդիրը կամ շատ հազվադեպ, խոսքով ինչ-որ չափով հանգստացրել, բայց գործել իր խոսքին հակառակ: Ով ով, նա շատ լավ գիտեր, թե ինչ է կատարվել Ադրբեջանում, Հայաստանում, Լեռնային Ղարաբաղում: Նա ամենից լավ գիտեր, թե ով է ում հալածում, ով է իրականացրել ցեղասպանություն և Ադրբեջանում ավարտի հասցրել հայերի վերջնական, իսկ ռուսների ու հրեաների մասնակի բռնագաղթեցումը[6]: Լավ գիտեր, թե ում համբերության բաժակն է լցվել, բայց մտահոգություն էր արտահայտում Ադրբեջանը հայ «գրոհայինների» հետևողական հարձակումներից փրկելու և ադրբեջանցիների «համբերության» համար: Այո՛, ինչպես կենտրոնական մամուլը, այնպես էլ կենտրոնական հեռուստատեսությունը, ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը անդրդվելի մնացին, չէ՞ որ նրանք հատուկ հրահանգ էին ստանում «վերևից»: Ռուսաստանի խորհրդարանում 1990 թ. սեպտեմբերի 21-ին մեծ ուշադրության արժանացավ ԽՍՀՄ պրեզիդենտ Մ. Գորբաչովին ուղղված դիմումը, որը ստորագրել էին պառլամենտի երեսուն անդամներ: Այդ դիմումում մասնավորապես ասվում էր. «ՌԽՖՍՀ Գերագույն խորհրդի անդամներս, լսելով այս հաղորդումը, անհանգստություն հայտնելով խորհրդարանի անդամների առողջական վիճակի համար, որոնք ստիպված են ծայրահեղ միջոցի՝ հացադուլի դիմել հանուն օրինական իշխանության վերականգնման ԼՂԻՄ-ում, որը հայտնվել է վերացման սահմանագծում, դիմում ենք ձեզ՝ պահանջելով ապահովել ԼՂԻՄ-ի բնակչության իրական անվտանգությունը, հնարավոր ամեն ինչ անելու, որ փրկվի ժողովրդական պատգամավորների կյանքը, …խստիվ կիրառել ԽՍՀՄ սահմանադրությունը, պաշտպանել քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները, ինչպես այդ մասին դուք ասում էիք երկրի պրեզիդենտի՝ ձեր երդման մեջ»:

4. Դեմիրճյանը՝ կազմակերպված սպանդի զոհ

Դատելով գորբաչովյան հարցադրումներից՝ Կարեն Դեմիրճյանին առաջ ինչ-որ չափով մեղադրում էինք. այդ մեղադրանքը լրիվ ի չիք դարձավ: Դեմիրճյան տնտեսվարը վճռեց վերադառնալ ակտիվ քաղաքական կյանք, զբաղվել քաղաքականությամբ և մասնակցել նախագահական ընտրություններին: Ես դրականապես արձագանքեցի այդ առնչությամբ իր թեկնածությունը ինչ-որ ձևով պաշտպանելու՝ ինձ արված նրա առաջարկությանը: Մի քանի ընկերներով հեռուստատեսությամբ հանդես եկանք նախագահական ընտրություններում Դեմիրճյանի թեկնածությունը պաշտպանելու հիմնավորումներով:

---

[5] Նույն տեղում, էջ 100:

[6] Նույն տեղում, էջ 227:

Եվ մշտապես հանդես էի գալիս գրավոր ու բանավոր, ինչպես նաև հեռուստատեսությամբ ելույթներով պաշտպանում էի նրա թեկնածությունը: Հեռուստատեսությամբ ելույթներից մեկում, որը գրառում էր իր որդին՝ Ստեփան Դեմիրճյանը, ես հիմնավորեցի Կարեն Դեմիրճյանի թեկնածությունը: Այնուհանդերձ, ինքը նախագահ չընտրվեց. և բոլորը չէ, որ նախագահ են ընտրվում:

Ապա հանդես եկա Ազգային ժողովում նրան պատգամավոր ընտրելու կապակցությամբ: Նրա թիմը գերազանց հաղթանակ տանելով՝ ուրախացրեց բոլորին: Այնուհետև առաջադրվեց Ազգային ժողովի նախագահ և փայլուն կերպով ներկայացնում էր իր գործունեությունը, բայց դա դուր չէր գալիս ոմանց. սև ու մութ ուժերը օրը ցերեկով, նախապես բազմիցս անարգել ելումուտ անելով Ազգային ժողովի շենքում, հենց Ազգային ժողովում, նիստի ժամանակ սպանեցին Դեմիրճյանին, վարչապետ Վազգեն Սարգսյանին, պատգամավոր Միքայել Քոթանյանին և մյուսներին՝ թվով ութ անձանց: Հայ ժողովուրդն ի սրտե ողբաց այդ անօրինակ կորուստը, սակայն դատավարությունը իրականացվեց ոչ պատշաճ մակարդակով, և առ այսօր չեն պարզվել սպանդը կազմակերպողների իրական դեմքերը:

Ես համոզված էի և, այսօր էլ մնում եմ այդ կարծիքին, որ մենք կորցրեցինք շատ մեծ մարդու, գաղափարապես տոկուն մի հայորդու, պետական, հասարակական ու քաղաքական աննկուն գործչի, մեծ հայրենասերի, որը պատրաստ էր իր գիտելիքներն ու կազմակերպչական տաղանդը նվիրաբերել երկրի ճգնաժամային վիճակը հաղթահարելու և Հայաստանը զարգացած երկրների մակարդակին հասցնելու վսեմ առաքելությանը:

Ափսոս, արդեն ուշ է:

ԽՈՋԱԲԵԿՅԱՆ Վ. Ե.
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս